ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԼԻՔՈՎ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

ԼՂԻՄ-ի պրոբլեմի շուրջ ռեգիոնում ծայրահեղ սրված իրավիճակի կապակցությամբ, ԽՄԿԿ Կենտկոմի առաջարկությամբ, Մոսկվայում տեղի ունեցավ Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամների հանդիպում: Հանդիպման մասին ՏԱՍՍ-ի հաղորդագրության մեջ նշվում էր. հանդիպման մասնակիցները մեծ ուշադրություն նվիրեցին Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին, որը, նրանց կարծիքով, իր լուծումը կարող է գտնել սահմանադրական, դեմոկրատական հիման վրա միայն:

Շուտով մամուլում հրապարակվեցին երկու հանրապետությունների կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարների հարցազրույցները: Պատասխանելով Արմենպրեսի թղթակցի հարցերին, Ս. Գ. Հարությունյանը շարադրեց քննարկվող պրոբլեմի էությունը և երկու հանրապետությունների փոխհարաբերությունների նորմալացման հնարավոր ուղիները: «Երկու հանրապետությունների հարաբերությունների կարգավորումը,— նշեց Ս. Գ. Հարությունյանը,— հնարավոր է միմյանց ընդառաջ քայլեր կատարելու, փոխզիջումների համատեղ որոնման պայմանով... Լեռնային Ղարաբաղի առթիվ մեր դիրքորոշումը հստակորեն ու միանշանակ կերպով արտահայտվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում: Այդ դիրքորոշումը մեր ժողովրդի կամքի արտահայտությունն է, և մենք հայտարարեցինք, որ մտադիր չենք շեղվել դրանից: Միևնույն ժամանակ երկխոսության և ազգային հաշտեցման ուղիներ կորոնենք, մեզանից կախված ամեն ինչ կանենք, որպեսզի վերջ տրվի ազգամիջյան թշնամանքին, որպեսզի Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների միջև հաստատվեն նորմալ հարաբերություններ... Մենք առաջարկեցինք ընդունել երկու հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինների համատեղ դեկլարացիա, որը կապահովեր բնակչության անվտանգությունը, կդատապարտեր ցեղասպանությունը, վանդալիզմը և մարդկայնության դեմ ուղղված բռնության մյուս գործողությունները... Երկու հանրապետությունների ղեկավարները պարտավոր են հանդես գալ առավել կշռադատված, կոնստրուկտիվ դիրքերից, համատեղ որոնել խելամիտ փոխզիջումներ: Թշնամանքը առհասարակ ոչ մեկին օգուտ չի բերել: Մենք ուզում ենք կամուրջներ գցել ազգային տարանջատվածության անդունդի վրայով»:

Հանդիպման արդյունքների լուսաբանման և ԼՂԻՄ-ի պրոբլեմի էության վերլուծության նկատմամբ միանգամայն այլ դիրքորոշում արտահայտեց Ա. Խ. Վեզիրովը: Նրա հարցազրույցը այլ կերպ չի կարելի գնահատել, քան Ադրբեջանի ծայրահեղական ուժերի բացահայտ պաշտպանություն, ուժեր, որոնց կարծիքով ԼՂԻՄ-ի պրոբլեմ չկա: Նա փաստորեն պաշտպանեց ագրեսիվորեն տրամադրված մտավորականության մի մասին և նրանց հետևող զանգվածներին, որոնք կոչ են անում վերացնել ինքնավար մարզը և հայ բնակչությանը սպառնում են հաշվեհարդարով: Հանուն ադրբեջանական ազգին իր նվիրվածության ապացուցման, նա ըստ էության հրաժարվեց խորհրդային ֆեդերացիայի դեմոկրատական սկզբունքներից, ընթացավ մյուս ժողովուրդների իրավունքների բացահայտ անտեսման ճանապարհով:

Անդրադառնանք Ա. Խ. Վեզիրովի տվյալ հարցազրույցի հիմնական գաղափարներին, հարցազրույց, որն առատ էր հակադեմոկրատական ու հակասական դատողություններով: «Մեզ համար երբեք չի եղել Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելության պրոբլեմ»,-- հայտարարեց նա: Նման մոտեցումը կարելի էր նաև ողջունել, քանի որ քիչ հետո իր համար աննկատելիորեն նա պարզաբանում է. «Իր հողի, նրա բոլոր հարստությունների իսկական տերը ժողովուրդն է, և միայն նա իրավունք ունի լուծել դրա հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում տարածքային հարցերը» («Բակինսկի ռաբոչի», 1989 թ. սեպտեմբերի 6):

Եթե իր հողի տերը լինելու ժողովրդի անվերապահ իրավունքի մասին վաղուց հայտնի ճշմարտությունը ճանաչվում է նաև Ադրբեջանի կոմկուսի ղեկավարի ու նրա համախոհների կողմից, ապա, իրոք, չպետք է լինի Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելության պրոբլեմ, քանի որ այդ տարածքը, այդ հողը պատկանում է այն ժողովրդին, որն այնտեղ ապրել է դարեդար և այժմ էլ ապրում է, իսկ պատմական ու արդի իրողությունը անհերքելիորեն վկայում է, որ այդ հողի վրա ապրել ու ապրում է հայ ժողովուրդը, որն իրավունք ունի լուծել իր ճակատագիրը և իր տարածքի հարցը:

Սակայն «ժողովուրդ» հասկացությունը Ա. Խ. Վեզիրովը վերագրում է միայն ադրբեջանական ազգին, ուստի և արդեն ո՛րերորդ անգամ բորբոքելով ազգայնամոլական կրքերը, հռչակում է, որ «Լեռնային Ղարաբաղը եղել է, է՛ և կլինի մեր հողը, մեր ինքնիշխան հանրապետության հողը»: Այստեղ թաքնվում է ոչ միայն ուրիշ ժողովուրդների իրական գոյությունը ժխտելու գործոնը, այլև ինքնիշխանության կամայական ըմբռնումը: Ա. Խ. Վեզիրովի և նրա գիտական խորհրդատուների ըմբռնմամբ՝ ինքնիշխանության իրավունքով օժտված են միայն միութենական հանրապետությունները, այլ ոչ թե ժողովուրդները: Մինչդեռ դա խոր մոլորություն է, որը հեշտությամբ հերքվում է ինչպես ԽՄԿԿ և խորհրդային պետության ծրագրային փաստաթղթերով, այնպես էլ միջազգային նորմերով:

Այդ առնչությամբ հիշեցնենք, որ ցարիզմից ազատագրված ժողովուրդների հանրության իսկական դեմոկրատական կազմակերպության մասին առաջին ծրագրային փաստաթղթում՝ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում», որպես գլխավոր պահանջ հռչակվում է **ժողովուրդների հավասարությունն ու ինքնիշխանությունը:**

Արդյո՞ք հարկ կա ապացուցելու, որ այս դրույթում խտացված կերպով արտահայտված է երկու իրո՛ք մարդասիրական սկզբունքների զուգորդումը՝ ինչպես ժողովուրդների իրավահավասարության ապահովումը (անկախ նրանց թվից ու տարածքի չափերից), այնպես էլ մի ժողովրդին մյուսին ենթարկելը բացառելը:

Որքան էլ տարօրինակ է, ժողովուրդների ենթարկված և ճնշված դրությունն առկա էր ոչ միայն շահագործողական հասարակարգում, այլև հնարավոր դարձավ նաև ստալինյան սոցիալիզմի շինարարության և նրա «ավտոնոմիզացիայի» ծրագրի հաստատման պայմաններում: «...Ինքնավար կազմավորումները,— նշվում է ԽՄԿԿ պլատֆորմի նախագծում,— հնարավորություններ չունեն պահանջմունքները լիովին իրացնելու համար, իրենց վրա զգում են գերատեսչական ճնշումը և միութենական, հանրապետական, ինչպես նաև երկրամասային ու մարզային իշխանությունների մանր խնամակալությունը»:

Խորհրդային հասարակայնությունը ԼՂԻՄ-ի պրոբլեմի պատճառների մասին նույնիսկ կցկտուր հաղորդումներից գիտե, որ տասնամյակներ շարունակ Ադրբեջանի հանրապետական մարմինները ԼՂԻՄ-ի նկատմամբ աննախադեպ ճնշում են գործադրել: Այս մասին ասվում է նաև ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թվականի մարտի 24-ի որոշման մեջ:

Այդ որոշումը, ինչպես միութենական մարմինների հետագա բոլոր որոշումները, Ա. Խ. Վեզիրովը մոռանում է: Այսօր նա ափսոսում է, որ ստեղծվել է ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտե միայն այն պատճառով, որ «վերափոխումները (այսինքն՝ ընտրովի խորհրդային ու կուսակցական մարմինների արձակումը.— Լ. Կ.) չարծարծեցին իշխանության տեղական մարմինները»: Այլ կերպ ասած՝ հարևան հանրապետության կուսակցական կազմակերպության ղեկավարը ԽՄԿԿ ծրագրին ու կանոնադրությանը, երկրի սահմանադրությանը հակառակ կոչ է անում վերացնել ինքնավար մարզի ղեկավարման ու կառավարման բոլոր դեմոկրատական մարմինները:

Ժողովուրդների ճակատագրի հետ վարվելու նման մեթոդները ինքնատիպ չեն, դրանք վերցված են անձի պաշտամունքի և ստալինականության բարգավաճման ժամանակների հետադիմական զինանոցից, երբ մեկ գիշերվա ընթացքում կարող էին վերացնել ազգային-պետական կազմավորումները և բռնագման ենթարկել ամբողջ ժողովուրդների:

Ա. Խ. Վեզիրովի հարցազրույցում կան նաև հարևան ժողովուրդների փոխըմբռնման հասնելու կոչեր: «Մեր ժողովուրդների ավանդույթները,— ասում է նա,— սովորեցնում են, երբ տանը դժբախտություն է պատահում, ապա վիրավորանքները իրենց տեղը պետք է զիջեն փոխըմբռնմանը: Մենք հանդիպման էինք գնացել հենց այդ նպատակով»: Բայց այդ ազնիվ նպատակը արմատապես մերժվում է իր իսկ միանշանակ ու կտրական հայտարարությամբ. «Հենց սկզբից Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները փորձեցին հիմնական հարցը դարձնել ԼՂԻՄ-ի պրոբլեմը: Բայց մենք վճռականորեն մերժեցինք»: Հիրավի, տարօրինակ է. հավաքվել էին ԼՂԻՄ-ի պրոբլեմի առնչությամբ երկու հանրապետությունների միջև ծագած խիստ պայթյունավտանգ իրավիճակը քննարկելու համար, և հանկարծ փոխըմբռնման «խուսափողները» վճռականորեն մերժում են այդ խնդիրը:

Կամ էլ՝ մի ուրիշ հայտարարություն. «...Մենք առանց տատանվելու վճռական հակահարված կտանք նրանց, ովքեր սահմանների վերաձևման կոչ են անում»: Բայց չէ՞ որ սահմանների վերաձևման մասին արհեստականորեն մտածված գաղափարը ելնում է Ադրբեջանի ղեկավարությունից ու մտավորականությունից: Ոչ Հայաստանում, ոչ էլ ԼՂԻՄ-ում ոչ ոք չի առաջարկում վերաձևել սահմանները: Բանի ամբողջ էությունն այն է, որ խոսքը վերաբերում է Լեռնային Ղարաբաղը ստալինյան բռնատիրությունից ռեաբիլիտացնելուն, տարածքային, ֆիզիկական ու հոգևոր ազատագրմանը, Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից նրա դուրս գալուն, ուր բռնի կերպով, ժողովրդի կամքին հակառակ, մարզը մտցվել էր 20-ական թվականների սկզբին: Խոսքը վերաբերում է նրա ժողովրդի իրավահավասարության և ինքնիշխանության ճանաչմանը: Այնժամ ադրբեջանական ժողովուրդն էլ դուրս կգա գաղափարախոսական հիպնոսի վիճակից և կհասկանա, որ ոչ ոք ոտնձգություն չի կատարում իր տարածքի դեմ: Այն ժամանակ Ա. Խ. Վեզիրովը չէր արդարանա, թե իբր ինքը երբեք չի համաձայնել նույնիսկ փոխզիջումային լուծման այնպիսի տարբերակի հետ, ինչպիսին ԼՂԻՄ-ում միջազգային պրակտիկայում հայտնի պրեզիդենտական կառավարում մտցնելն է: Այն ժամանակ նա ձեռնպահ կմնար սպառնալի տոնից, կտրական նախազգուշացումից. «Եվ եթե դրա տակ որևէ մեկը հասկանում է ԼՂԻՄ-ի լիակատար ենթարկում կենտրոնին, ապա ես ուզում եմ հայտարարել, որ Ադրբեջանի ղեկավարությունը վճռականորեն դեմ է ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից անջատելու ամեն մի քայլին»:

Չէ՞ որ փոխըմբռնումը ենթադրում է որոշակի փոխզիջում: Իսկ եթե Ադրբեջանի ղեկավարությունը կտրականապես մերժում է նույնիսկ միջազգային պրակտիկայում հայտնի պրեզիդենտական ժամանակավոր կառավարում մտցնելու հնարավորությունը կամ ցանկացած այլ առաջարկություն և առաջ է քաշում միայն վերջնագրային-սպառնալից պահանջներ, ապա փոխըմբռնման հասնելու նրա կոչերը այլ կերպ չի կարելի անվանել, քան քաղաքական երեսպաշտություն:

Ուզում ենք Լենինի պատկերով կուսակցական տոմս կրող կուսակցական գործչին հարցնել. արդյոք նա ընդունո՞ւմ է ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքը թեկուզ խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում, թե՞ ընդունում է միայն ուրիշ ժողովուրդների իրավունքը բոլոր միջոցներով ճնշելու ադրբեջանական ղեկավարության իրավունքը:

Ա. Խ. Վեզիրովն ընդգծում է «յուրաքանչյուր միութենական հանրապետության ներքին գործերին չմիջամտելու, նրա ինքնիշխան իրավունքները հարգելու բացառիկ կարևորությունը»: Բայց ի՞նչ իրավունքով է այդ հանրապետության ղեկավարությունն ուզում պահպանել ինքնավար մարզի բոլոր գործերին միջամտելու պրակտիկան և մերժել նրա ժողովրդի ինքնիշխանությունը: Կարող են պատասխանել, որ գործող օրենսդրության համաձայն ԼՂԻՄ-ը մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ: Բայց չէ՞ որ այժմ արդեն հանրահայտ է սահմանադրության համապատասխան դրույթների անկատարությունը, որոնց ակունքները սկիզբ են առնում ստալինյան «ավտոնոմիզացիայից»: Կարելի է չկասկածել, որ այդ բոլոր անհամապատասխանությունները կվերացվեն նոր սահմանադրության մեջ, որը մշակվում է ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարի որոշմամբ: Իսկ Ադրբեջանում այնպիսի տեսք են ընդունում, կարծես չգիտեն ժողովրդական դեպուտատների որոշման մասին, այն մասին, որ ազգային քաղաքականության վերաբերյալ ԽՄԿԿ պլատֆորմի նախագծում նախատեսվում է բոլոր միջոցները ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, Ղրիմի թաթարների, Պովոլժիեի գերմանացիների, հույների, քրդերի, կորեացիների, մեսխեթցի թուրքերի և ուրիշների պրոբլեմները լուծելու համար: Չէ՞ որ նրանք գիտեն, որ ներկայումս այդ պրոբլեմների կապակցությամբ աշխատում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովներ, առաջարկություններ են պատրաստվում մի շարք ինքնավար ազգային կազմավորումների վերամիավորման մասին: Չէ՞ որ համապատասխան միութենական հանրապետությունների ոչ մի ղեկավար ոչ մի տեղ չի հայտարարել, որ դա կհանգեցնի «սահմանների վերաձևման» և դրանց տարածքների «օտարացման»:

Ասես նրանք չեն նկատել, որ պլատֆորմի նախագծում կա այսպիսի մի կարևոր դրույթ. «Ինքնավար մարզի կամ օկրուգի տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության»: Մի՞թե հասկանալի չէ, որ դրանով իսկ ճանաչվում է ցանկացած ազգային-պետական կազմավորման ժողովրդի սուվերեն իրավունքը:

ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման դեմոկրատական ուղիների որոնման փոխարեն Ադրբեջանական ԽՍՀ որոշ ղեկավարներ ու մտավորականներ, գոյություն ունեցող իրողություններին հակառակ, փորձում են ժխտել վաղուց գոյություն ունեցող և արմատը ԼՂԻՄ-ի պրոբլեմը: Բարիդրացիական հարաբերությունների հաստատման հասնելու ուղիներ որոնելու փոխարեն նրանք իրենց ժողովրդի ավելի ու ավելի լայն զանգվածների են մղում ագրեսիվ գործողությունների, կոչ անում միավորել քաղաքական ու ֆիզիկական ուժերը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում բռնի կերպով պահելու համար: Այդ կոչի գործնական հետևանքը խորհրդային պետության ներսում Լեռնային Ղարաբաղի ու Հայկական ԽՍՀ շրջափակման աննախադեպ փաստն է: Իր հարցազրույցում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը նույնիսկ չհիշատակեց այդ խայտառակ ու անմարդկային ակտի մասին, որը ոչ միայն ծայրաստիճան շիկացնում է հարևան հանրապետությունների փոխհարաբերությունները, այլև հսկայական վնաս է հասցնում ամբողջ խորհրդային պետությանը: Եվ դա պատահական չէ, քանի որ ըստ երևույթին շրջափակման կազմակերպումը մտնում է ինչպես ԼՂԻՄ-ին ու Հայաստանին, այնպես էլ միութենական մարմիններին ուժային ճնշման, շանտաժի ու ահաբեկման ենթարկելու ընդհանուր ծրագրի մեջ: Ստիպված ենք տարակուսանք հայտնել, որ միութենական մարմինները բռնել են չմիջամտելու դիրք, ըստ էության չեն իրականացնում իրենց քաղաքացիների սոցիալական ու ֆիզիկական, ընդհանուր պետական շահերի պաշտպանության ֆունկցիան: Ադրբեջանական ժողովրդին մշտապես ներշնչում են, որ Լեռնային Ղարաբաղի հարցում հեռակայական նպատակի հասնելը նրա պատվի ու արժանապատվության գործն է: «Ոչ մեկի մոտ կասկած չի կարող մեր տոլերանտության ու հետևողականության հարցում, — հայտարարում է Վեզիրովը,— երբ խոսքը վերաբերում է Ադրբեջանի ինքնիշխանության, նրա ժողովրդի պատվի ու արժանապատվության պաշտպանությանը»:

Կուսակցական ղեկավարին, որը հավակնում է իր ինտերնացիոնալիզմի ճանաչման և մյուսներին դրա կոչն է անում, պետք է հասկանալի լինի, որ ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը հնարավոր չէ պաշտպանել ու պահպանել ուրիշ ժողովուրդներին իրենց թելադրանքը բռնի պարտադրելու ճանապարհով: Իրեն կոմունիստ անվանող մարդը իրավունք չունի մոռանալ գիտական սոցիալիզմի հիմնադիրների առաջ քաշած վեհ մարդասիրության ու ինտերնացիոնալիզմի սկզբունքը. «Չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը ճնշում է ուրիշ ժողովուրդների»:

Ազգամիջյան հարաբերությունների հիերարխիայում բարոյական անանց իմպերատիվը ուրիշ ժողովրդի ազատության ճանաչումն է, նրա ինքնիշխանության և ինքնորոշման իրավունքի ճանաչումը: Հենց այս դիրքերից է Ս. Գ. Հարությունյանի հարցազրույցում ընդգծվում, որ «ազգերի ինքնորոշման իրավունքը ավելի բարձր, նշանակալի և, որ գլխավորն է, ավելի բարոյական է մնացած բոլոր սկզբունքներից: Դա պաշտպանում էր Լենինը դեռ դարասկզբին: Այս գաղափարը, ինչպես նշված է ԽՄԿԿ պլատֆորմում, առանցքային է ազգային հարցում ծրագիրն իրականացնելիս»:

Ըստ երևույթին դա՛ չեն ուզում հասկանալ Ադրբեջանական ԽՍՀ-ի որոշակի ուժեր Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման նկատմամբ իրենց մոտեցման հարցում:

Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ.—Այս հրապարակման նախօրեին, ս. թ. սեպտեմբերի 17-ին, կենտրոնական հեռուստատեսությամբ տեղի ունեցավ Ա. Խ. Վեզիրովի հերթական հարցազրույցը: Անփորձ հեռուստադիտողին հրամցվեց «ինտերնացիոնալիզմի» և Ադրբեջանի ղեկավարության կողմից հատկապես Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հասնելու մասին հերթական փարիսեցիությունը: **Մինչդեռ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի այդ նույն նիստում (որի մասին կենտրոնական հեռուստատեսության թղթակիցը երեք օր շարունակ ինֆորմացիա էր տալիս «Ժամանակ» ծրագրով) ելույթ ունեցող դեպուտատները բոլոր մասնակիցների լիակատար հավանությամբ կոչ էին անում խստացնել ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակումը, իսկ ոմանք նույնիսկ սուր էին ճոճում: Ա. Խ. Վեզիրովը ոչ մի բառ չասաց այդ մասին, հատկապես այն մասին, որ իր ղեկավարած հանրապետությունը չհայտարարված պատերազմ է մղում ԼՂԻՄ-ի և հարևան հանրապետության դեմ: Ասես նա չգիտի, որ կազմակերպված շրջափակման հետևանքով շինանյութով, վառելիքով, պարենամթերքով և կենսականորեն կարևոր այլ բեռներով տասնյակ հազարավոր վագոններ չեն անցնում Ադրբեջանի տարածքով, որ այդ շրջափակման հետևանքով խիստ ծանր իրավիճակ է ստեղծվել ինչպես ԼՂԻՄ-ում, այնպես էլ Հայաստանում, հատկապես երկրաշարժի գոտում: Ասես նա տեղյակ չէ, որ Բաքվում և Ադրբեջանի այլ վայրերում սկսվել է հայ բնակչության նկատմամբ բռնացումների ու նրանց բնակարանների կողոպտման, երկրի մյուս շրջանները նրանց մեկնելուն խոչընդոտելու նոր փուլ: Ասես նա չգիտի, որ սահմանամերձ շրջաններում ադրբեջանական գրոհայինները ամեն օր կատարում են ավազակային հարձակումներ: Այդ հարցերի առթիվ տագնապ արտահայտելու փոխարեն նա միանգամայն հանգիստ ձեռքը դրեց սրտին և առանց տարրական քաղաքացիական խղճի խայթի մոլորեցրեց ամբողջ երկրի հասարակայնությանը:**

Տվյալ դեպքում տարակուսանք է պատճառում, որ այդպիսի հաղորդումներ պարբերաբար կազմակերպում է կենտրոնական հեռուստատեսությունը: Արդյոք դրանց կազմակերպիչները չե՞ն մտածում, որ դրանով իսկ ակտիվորեն մասնակցում են ազգամիջյան երկպառակտչության բորբոքմանը և ոգեշնչում պայթյունավտանգ իրավիճակի ընդլայնմանը: